



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Երևան, Կառավարական փողոց 1

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

(«Վիսլա» ՍՊ ընկերության 24.02.2017թ. վարչական բողոքը  
բավարարելու մասին)

**Ք. ԵՐԵՎԱՆ**

**«29» ՄԱՐՏԻ 2017թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ.-ի թիվ 42/4 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ «Վիսլա» ՍՊ ընկերության 24.02.2017թ.-ի բողոքը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.**

«Վիսլա» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ Բողոք բերած անձ)՝ ի դեմս տնօրեն Գևորգ Հակոբյանի, բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Գանգատարկման հանձնաժողով) 23.12.2016թ. թիվ 42/4 որոշումն (այսուհետ նաև՝ Որոշում) անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմ 24.02.2017թ.-ին, իսկ Հանձնաժողովի քարտուղարություն՝ 27.02.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ 20.11.2016թ. Գանգատարկման հանձնաժողով է ներկայացրել բողոք՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ ԿԱ

ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 07.10.2016թ. թիվ 331222/08 որոշումն անվավեր ճանաչելու խնդրանքով:

Գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ. թիվ 42/4 որոշմամբ Ընկերության բողոքը մերժվել է:

Որպես բողոքի փաստական հիմք Բողոք բերած անձը նշել է, որ՝

- Գանգատարկման հանձնաժողովի նիստը կայացել է 23.12.2016թ.-ին, մինչդեռ Բողոք բերած անձը ծանուցվել է նիստի մասին 24.12.2017թ-ին, ինչն անհնար է դարձրել վերջինիս մասնակցությունը վերը նշված նիստին:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 19.01.2017թ. թիվ 176-07 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 07.10.2016թ. թիվ 331222/08 որոշմամբ սահմանված 20.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձումն իրականացնելու համար առանց դրա համար պատշաճ իրավական հիմքի, այն է՝ դիմելու պահին վերոհիշյալ որոշումը անբողոքարկելի չի եղել:

Վերոգրյալից ելնելով Բողոք բերած անձը խնդրել է՝

- անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ. թիվ 42/4 որոշումը՝ պատշաճ ծանուցված չլինելու և իր բացակայությամբ ընդունված լինելու պատճառաբանությամբ,

- հայտնել, արդյո՞ք օրինական է եղել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից բռնագանձման համար ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության դիմելը:

## **2. Մասնակցի դիրքորոշումը.**

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի մարտի 29-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանը և լիազորված անձ Վահե Մակարյանը:

Ընկերության տնօրենը լսումների ընթացքում պնդեց բողոքով ներկայացված պահանջը, ևս մեկ անգամ նշելով, որ վերջինս պատշաճ ծանուցված չի եղել և հնարավորություն չի ունեցել մասնակցելու Գանգատարկման հանձնաժողովի նիստի լսումներին, ինչպես նաև նշեց, որ անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր, համաձայն որոնց ընկերությունն ունեցել է սահմանված ժամկետներում չվճարված հարկային այլ պարտավորություններ ևս, որոնց համար վարչական պատասխանատվության չի ենթարկվել:

### **3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության 8-րդ բաժնի առաջատար մասնագետ Ա. Գալստյանի կողմից 07.10.2016թ. կազմվել է թիվ 2538 արձանագրությունը, որի համաձայն. ««Վիսլա» ՍՊ ընկերությունը՝ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների, օրենքով սահմանված ժամկետում չի վճարել 24.09.2016թ.-ի դրությամբ 169.854 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները, որից եկամտային հարկը կազմել է 165.747 ՀՀ դրամ, սոցիալական վճարը՝ 3.630 ՀՀ դրամ, որոնք առաջացել են 2016թ.-ի հուլիս և օգոստոս ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկից, շրջանառության հարկ 477 ՀՀ դրամ տույժի գումար, որն առաջացել է 2016թ.-ի 2-րդ եռամսյակի հաշվարկի նկատմամբ հաշվարկված տույժի մնացորդից: Նշած փաստի հիման վրա վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՎԻՎՕ) 170<sup>3</sup>-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու հարցը քննարկելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: «Վիսլա» ՍՊ ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանը արձանագրության կազմման վայրի և ժամի մասին պատշաճ ծանուցված լինելով չի ներկայացել, ուստի այն կազմվում է վերջինիս բացակայությամբ: Վերոգրյալը հաշվի առնելով և նկատի ունենալով, որ բացակայում են պատասխանատվությունը մեղմացնող կամ բացառող հանգամանքները, ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանը ենթակա է վարչական պատասխանատվության»:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանի կողմից 27.10.2016թ. կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 331222/08 որոշումը, համաձայն որի՝ քննելով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության 07.10.2016թ. թիվ 2538 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, և ղեկավարվելով ՎԻՎՕ-ի 170<sup>3</sup>-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244<sup>2</sup>-րդ, 281-րդ հոդվածներով, 282-րդ հոդվածի 1-ին մասով, որոշվել է Ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ 20.000 ՀՀ դրամի չափով:

- Ընկերությունը 20.11.2016թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին ներկայացրել է բողոք՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 27.10.2016թ. թիվ 331222/08 որոշումը:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված վարչական գործի նյութերում առկա է «19.12.2016թ.» թվագրմամբ «06/11-1/39178-16» համարով «Ծանուցագիր» վերտառությամբ գրություն, որով Ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանը ծանուցում է արվել 23.12.2016թ. նախատեսվող ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի նիստի մասին:

- Բողոքին կից ներկայացված է «RR 229473855AM» համարով փոստային ծրար, որի վրա առկա է ՀՀ ԿԱ ՊԵԿ ծանուցագրում նշված ելքի «06/11-1/39178-16» համարը: Առաքանու համարի միջոցով «www.haypost.am» կայքի միջոցով իրականացված փնտրման արդյունքում հայտնաբերված տեղեկատվության համաձայն, նշված առաքանին 21.12.2016թ. ուղարկվել է համապատասխան տարածք, սակայն հասցեատիրոջ կողմից փաստացի ստացված լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

- Գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ.-ի թիվ 42/4 որոշմամբ Ընկերության գանգատը մերժվել է. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 07.10.2016թ. թիվ 331222/08 որոշումը թողնվել է անփոփոխ:

- ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Կոտայքի մարզային բաժնում 18.01.2017թ. կայացվել է որոշում ՀՀ ԿԱ ՊԵԿ 8-րդ բաժնից 17.01.2017թ. թիվ Իկ/թ176-07 գրության հիման վրա կատարողական վարույթ հարուցելու, Ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և 25.000 ՀՀ դրամի չափով արգելանք դնելու մասին:

#### **4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.**

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման** հետևյալ հիմնավորմամբ.

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ Գանգատարկման հանձնաժողովին ներկայացված գանգատի շրջանակներում Բողոք բերած անձի կողմից ըստ էության չի վիճարկվել բուն իրավախախտման փաստը՝ կապված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու հետ, սակայն հստակորեն բողոքարկել է հարկային մարմնի կողմից ՎԻՎՕ-ի 170<sup>3</sup>-րդ հոդվածով սահմանված տուգանքի առավելագույն չափի՝ 20.000 ՀՀ դրամի կիրառման իրավաչափությունը, Հանձնաժողովն էական է համարում հետևյալ հանգամանքների պարզումը՝

1) վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված տուգանքի նվազագույն և առավելագույն սահմանների որոշումը և կիրառումը կարո՞ղ է արդյոք դիտարկվել որպես հայցողական լիազորություն, թե՛ ոչ,

2) տուգանքը սահմանելիս վարչական մարմնի կողմից պարզվե՞լ են արդյոք բոլոր փաստական հանգամանքները՝ ներառյալ պատասխանատվությունն ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքների առկայությունը,

3) Գանգատարկման հանձնաժողովի կողմից ապահովվել է արդյոք Բողոք բերած անձի պատշաճ մասնակցությունը գանգատարկման վարույթի շրջանակներում սահմանված լուսմներին, թե՛ ոչ:

Վերոհիշյալ հարցադրումների առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական մարմնի կողմից ՎԻՎՕ-ի 170<sup>3</sup>-րդ հոդվածի կիրառման շրջանակներում օրենքով վերապահված տուգանքի չափը որոշելու լիազորությունը հայեցողական է, որպիսի հանգամանքից ելնելով վարչական մարմինը պարտավոր էր գործել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն, հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

Նշված նորմը սահմանելով վարչական մարմնի իրավունքը՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը, չի դիտարկել այն որպես բացարձակ հնարավորություն՝ դրա հետ մեկտեղ ամրագրելով այդ հնարավորության իրականացման սահմանները:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Նշվածից հետևում է, որ բացի վերոհիշյալ նորմում ուղղակիորեն ամրագրված սահմաններից, որպիսիք են՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունը, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության պահպանումը և այլն, վարչական մարմինը պարտավոր է հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ, օրինակ՝

բացահայտել կոնկրետ հարցի լուծման համար հայեցողական լիազորություն վերապահելու օրենսդրի նպատակը, որի դեպքում միայն վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորության իրականացումը կարող է դիտարկվել իրավաչափ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող վարչական գործի շրջանակներում վարչական մարմինը պատշաճ գնահատման չի արժանացրել վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ընդհանուր կարգավորումները և դրանցից բխող այն իրավաչափ նպատակը, որից ելնելով վարչական մարմինն վերապահվել է տուգանքի նվազագույն և առավելագույն չափերի ընտրություն կատարելու հայեցողական լիազորություն, որը Հանձնաժողովի գնահատմամբ, ուղղակիորեն բխում է ՎԻՎՕ 32-րդ հոդվածի կարգավորումներից:

Մասնավորապես, ՎԻՎՕ-ի 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն, վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, սույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՎԻՎՕ-ի 34-րդ հոդվածի համաձայն, վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

- 1) հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին.
- 2) մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից.
- 3) անչափահասին իրավախախտման մեջ ներգրավելը.
- 4) իրավախախտումը մի խումբ անձանց կողմից կատարելը.
- 5) իրավախախտումը տարերային աղետի պայմաններում կամ այլ արտակարգ հանգամանքներում կատարելը.
- 6) իրավախախտումը հարբած վիճակում կատարելը: Վարչական տույժ նշանակող մարմինը (պաշտոնատար անձը), նայած վարչական իրավախախտման բնույթին, կարող է տվյալ հանգամանքը ծանրացուցիչ չհամարել:

Վերոհիշյալ իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170<sup>3</sup>-րդ հոդվածով

սահմանված իրավախախտման համար նախատեսված սանկցիայի հարաբերական բնույթը՝ կոնկրետ այս դեպքում 10.000-20.000 ՀՀ դրամ սահմանելը պատահական չէ և նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված նորմի հետ համակարգային կիրառության շրջանակներում հնարավորություն է տալիս անհատական մոտեցում ցուցաբերել իրավախախտման յուրաքանչյուր դեպքին՝ հաշվի առնելով վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքերը:

Քննարկվող վարչական գործի շրջանակներում 07.10.2016թ. կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 2538 արձանագրությամբ վարչական մարմինն ամրագրել է, որ. «Վերոգրյալը հաշվի առնելով և նկատի ունենալով, որ բացակայում են պատասխանատվությունը մեղմացնող կամ բացառող հանգամանքները, ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանը ենթակա է վարչական պատասխանատվության»:

Նշվածից հետևում է, որ վարչական մարմինը մասնակի է գնահատել պատասխանատվության համար անհրաժեշտ հանգամանքների առկայությունը, որպես այդպիսին դիտարկելով միայն մեղմացնող հանգամանքների բացակայությունը, ինչը սակայն, Հանձնաժողովի գնահատմամբ, բավարար չի կարող համարվել, քանի որ ՎԻՎՕ-ի 32-րդ հոդվածի 2-րդ պարբերության կարգավորումից հետևում է վարչական մարմնի պարտականությունը՝ գնահատել նաև ծանրացնող հանգամանքների առկայությունը, որոնց առկայության կամ բացակայության վերաբերյալ վարչական մարմնի կողմից գնահատական առկա չէ:

Վարչական մարմնի կողմից ծանրացնող հանգամանքներին անդրադառնալու անհրաժեշտությունը Հանձնաժողովի կողմից կարևորվում է մեկ այլ տեսանկյունից ևս՝ եթե վարչական մարմինը տուգանքի առավելագույն չափը կիրառում է առանց ծանրացնող հանգամանքների, ինչպես պետք է իրացնի իր հայեցողական լիազորությունը՝ այդպիսի հանգամանքների առկայության դեպքում:

Հաշվի առնելով այն փաստը, որ վարչական մարմինը ՎԻՎՕ-ում ամրագրված կոնկրետ իրավախախտման համար սահմանված առավելագույն չափից՝ սույն գործով 20.000 ՀՀ դրամից առավել չափով տույժ իրավասու չէ կիրառել՝ Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ տվյալ պարագայում վարչական մարմինն ի սկզբանե իրեն զրկում է պատասխանատվության համար օրենքով սահմանված հանգամանքները գնահատելու և վարչարարության համաչափությունն ապահովելու հնարավորությունից:

Հանձնաժողովը գտնում է, որ նույնը վերաբերում է նաև տուգանքի նվազագույն չափի որոշմանը, որպիսի պարագայում կարևորվում է մեղմացնող հանգամանքների առկայությունը և բացակայությունը գնահատելու անհրաժեշտությունը:

Անդրադառնալով Գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ. թիվ 42/4 որոշմամբ ամրագրված դիրքորոշմանը, համաձայն որի՝ տուգանքի չափը որոշելու իրավունքը վերապահված է բացառապես իրավակիրառողին, որն օգտվելով իրեն վերապահված իրավունքից կայացրել է համապատասխան որոշում, Հանձնաժողովը գտնում է, որ այն անհիմն է և չի բխում բողոքարկված վարչական գործում առկա փաստական հանգամանքներից, որոնցից հստակ հետևում է, որ պարզված չեն եղել պատասխանատվության որոշման համար անհրաժեշտ բոլոր փաստական հանգամանքները, որոնք ենթակա էին պարզման օրենքով սահմանված պահանջից ելնելով:

Շեռևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման պահանջը, որի արդյունքում վարչական մարմինը պարտավոր էր բացահայտել գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքները:

Անդրադառնալով Բողոք բերած անձի այն փաստարկին, որ Գանգատարկման հանձնաժողովը չի ապահովել իր պատշաճ մասնակցությունը լուսմներին, քանի որ Գանգատարկման հանձնաժողովի նիստը կայացել է 23.12.2016թ.-ին, մինչդեռ Բողոք բերած անձը ծանուցվել է նիստի մասին 24.12.2017թ.-ին, Հանձնաժողովը գտնում է հիմնավոր, քանի որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից տարամադրված վարչական գործի նյութերում չհայտնաբերվեցին մինչև Գանգատարկման հանձնաժողովի նիստը դրա մասին Բողոք բերած անձի ծանուցված լինելու փաստը հավաստող պատշաճ ապացույցներ:

Մասնավորապես, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված վարչական գործի նյութերում առկա է «19.12.2016թ.» թվագրմամբ «06/11-1/39178-16» համարով «Ծանուցագիր» վերտառությամբ գրություն, որով Ընկերության տնօրեն Գևորգ Հակոբյանը ծանուցում է արվել 23.12.2016թ. նախատեսվող ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի նիստի մասին, սակայն որևէ հետադարձ ծանուցում այն Բողոք բերած անձի կողմից ստացված լինելու վերաբերյալ, առկա չէ:

Բողոքին կից ներկայացված է «RR 229473855AM» համարով փոստային ծրարի համարի միջոցով «www.haypost.am» կայքի միջոցով իրականացված փնտրման արդյունքում հայտնաբերված տեղեկատվության համաձայն, նշված առաքանին



21.12.2016թ. ուղարկվել է համապատասխան տարածք, սակայն հասցեատիրոջ կողմից փաստացի ստացված լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Նշվածի արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում Բողոք բերած անձի հիմնավորումը, որի արդյունքում ևս Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման պահանջը:

Անդրադառնալով Բողոք բերած անձի կողմից ներկայացված հարցադրմանը՝ սույն վարույթի շրջանակներում բողոքարկված վարչական ակտը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը հարկադիր կատարման ներկայացնելու վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է այն քննության ոչ ենթակա, քանի որ բացակայում է դրա վերաբերյալ ներկայացված որևէ պահանջ, իսկ Հանձնաժողովի գործունեությունն ուղղված է բողոքով ներկայացված պահանջի քննությանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ:

Նույն օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքեր են սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վիսլա» ՍՊ ընկերության 24.02.2017թ.-ի բողոքը **բավարարել**. անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների

գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ.-ի թիվ 42/4 որոշումը և պարտավորեցնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին կայացնել նոր վարչական ակտ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ